

ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.

ԻՆՉՊԵՍ ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ
ՀԱՄԱՎԱՐԱԿՆ ԱԶԴԵՑԻՆ
ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԱՐԴՅՈՒՆՔԱՅՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

DOI: 10.52174/2579-2989_2021_1_45

Հիմնաբառեր. համավարակ, պարերազմ, բանկային համակարգ, շահութաբերություն, կայունություն

Յուրաքանչյուր երկրում մակրոտնտեսական կայունությունը բնութագրվում է ըստ տնտեսության իրական և ֆինանսական հատվածներում ձևավորված միաժամանակյա հավասարակշռության, որն ապահովող կարևորագույն բաղադրիչներից մեկն էլ բանկային համակարգն է: Այս առումով, Հայաստանի Հանրապետությունը բացառություն չէ: Ավելին, ՀՀ ֆինանսական համակարգում բանկային հատվածի նշանակությունն առանցքային է: Հետևաբար՝ ոլորտի կազմակերպությունների ֆինանսական արդյունավետության գնահատումն անհրաժեշտություն է: Իսկ երբ երկրում մոլեգնում է համավարակը, և հենց նոր է «ավարվել» պարերազմը, ապա ֆինանսական համակարգի առևտրային արդյունավետության ուսումնասիրությունը ձեռք է բերում առավել մեծ կարևորություն: Այդ իսկ պարճառով հողվածում փորձ է արվել գնահատելու համավարակի և պարերազմի ազդեցությամբ ՀՀ բանկային համակարգի ֆինանսական արդյունավետության փոփոխությունը՝ ի դեմս շահութաբերության: Այդ նպատակով ուսումնասիրվել են ՀՀ առևտրային բանկերի զույր, սեփական կապիտալի և ակտիվների շահութաբերության, ինչպես նաև զույր շահույթի փոփոխման միտումները:

Յուրաքանչյուր երկրում տնտեսության ֆինանսական հատվածի կայունությունը պայմանավորող առանցքային գործոն է բանկային համակարգի առաջանցիկ զարգացումը: Ցանկացած պարագայում, հատկապես՝ ՀՀ տնտեսության պես փոքր տնտեսություններում, բանկային համակարգում առաջացող կամ առաջացած խնդիրները կարող են ունենալ շեշտա-



Գագիկ ԲԱՂԱԴՅԱՆ

ՀՊՏՀ մագիստրանտ

2019 թ., գերազանցությամբ ավարտելով ՀՊՏՀ բակալավրիատը («Հակաճգնաժամային կառավարում»), ընդունվել է մագիստրատուրա՝ «Գործարար վարչարարություն» մասնագիտությամբ: Ուսմանը զուգահեռ, «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի հեղափոխական խմբի անդամ է, ինչպես նաև աշխատում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում՝ որպես կորպորատիվ վարկավորման բաժնի վերլուծաբան: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից արժանացել է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորման: Հեղինակ և համահեղինակ է 6 գիտական հոդվածների:

կի բացասական ազդեցություն երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր մակարդակի վրա: Իսկ երբ խնդիրներն ի հայտ են գալիս պատերազմական իրավիճակի կամ համավարակի հետևանքով, ապա դրանց ազդեցությունը կարող է լինել առավել մեծ՝ հաշվի առնելով սիներգիզմի հնարավոր բացասական էֆեկտը: Այս առումով, ՀՀ-ում 2020 թվականին տարածված համավարակի պայմաններում, ինչպես նաև սանձազերծված պատերազմի համատեքստում պարզապես անհրաժեշտություն է դարձել բանկային համակարգի ֆինանսական արդյունավետության փոփոխության գնահատումը:


Առևտրային կազմակերպությունների ֆինանսական արդյունավետությունը բնութագրող ամենաառանցքային ցուցանիշները վերաբերում են շահութաբերությանը, և այս տեսանկյունից, բանկերը բացառություն չեն:

ՀՀ բանկային համակարգում 2020 թվականին գոյացել է 60.44 մլրդ ՀՀ դրամի չափով զուտ շահույթ: Հարկ է նշել, որ վերջինիս հաշվարկում ներառված են երկրում գործող 17 առևտրային բանկերի հրապարակած՝ տվյալ տարվա միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում ներառված «Զուտ շահույթ» հոդվածի ցուցանիշները (այլ ոչ թե «Համապարփակ ֆինանսական արդյունք» հոդվածի): Այնուամենայնիվ, միայն 2020 թվականի համա-

խառն զուտ շահույթի ցուցանիշի ներկայացումը բավարար չէ համավարակի և պատերազմի ազդեցությունը ՀՀ բանկային համակարգի շահութաբերության վրա գնահատելու համար, հետևաբար՝ հարկ ենք համարում անդրադառնալ նաև այդ ցուցանիշի փոփոխության շարժընթացին (զծապատկեր 1)¹:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ բանկային համակարգում գոյացած զուտ շահույթը 2020 թվականին բավական մեծ չափով անկում է գրանցել՝ 14.32 մլրդ ՀՀ դրամ: Բնականաբար, շահույթի -19.2%-ով անկումն իրապես լրջագույն ահազանգ է ոլորտում առաջացած խնդիրների մասին, ինչպես նաև այն ցուցիչը, թե որքան բացասաբար են ազդել համավարակն ու պատերազմն այս համակարգի վրա: Նման պնդումն ավելի է հիմնավորվում, երբ դիտարկում ենք այն հանգամանքը, որ 2016-2019 թվականներին այդ նույն ոլորտում համախառն զուտ շահույթը յուրաքանչյուր տարի միայն աճել է. կուտակային հավելաճն այս ժամանակահատվածում կազմել է 126.8%: Այսինքն՝ համավարակն ու պատերազմն ակնհայտորեն աճի տեմպ ունեցող համակարգում առաջացրել են արդյունավետության մակարդակի կտրուկ անկում:


Միայն զուտ շահույթի ցուցանիշի փոփոխությունների դիտարկմամբ դժվար է ապահովել արժանահավատ տեղեկու-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՀՀ բանկային համակարգի համախառն զուտ շահույթի փոփոխությունը 2016-2020 թթ.

¹ Այս և մյուս բոլոր ցուցանիշներն ըստ ՀՀ 17 առևտրային բանկերի պաշտոնական կայքէջերում գետեղված՝ 2020 թ. միջանկյալ և 2016-2019 թթ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների: Տեղեկությունների ամբողջական հղումները ներկայացված են գրականության ցանկում:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ՀՀ բանկային համակարգի զուտ շահութաբերության փոփոխությունը 2016-2020 թթ.

թյուններ, ուստի անհրաժեշտ է իրականացնել նաև գործակցային վերլուծություն: Ընդհանուր առմամբ, հոդվածում, որպես զուտ շահութաբերության ցուցանիշի այլընտրանք, ընդունել ենք զուտ շահույթի և ստացված տոկոսային եկամուտների հարաբերակցությունը (այսուհետ՝ զուտ շահութաբերության գործակից): Նման ընտրությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքով. բանկային համակարգում առավելապես գործառնական են համարվում հենց տոկոսային մուտքերը:


ՀՀ բանկային համակարգում զուտ շահութաբերության գործակիցը (ոլորտի համախառն զուտ շահույթի և համախառն տոկոսային եկամուտների հիման վրա հաշվարկված) 2020 թվականին կազմել է 12.3%, ինչը 2019 թվականի 17.3%-ի համեմատ նվազել է շուրջ 5%-ով: Ոլորտի զուտ շահութաբերության փոփոխությունը 2016-2020 թվականներին ներկայացված է գծապատկեր 2-ում:

Գծապատկերից ակնհայտ է, որ, 2017 թվականից սկսած, ՀՀ բանկային համակարգին բնորոշ է եղել զուտ շահութաբերության անընդհատ աճ, ինչը 2020 թվականին փոխարինվել է խոր անկմամբ: Այս համատեքստում անհրաժեշտաբար պետք է արձանագրել, որ 2020 թվականին, 2019 թվականի համեմատ, բանկային համակարգում տոկոսային եկամուտները գրանցել են բավական մեծ ծավալի աճ (մոտ 13.4%), ինչի հետևանքով հարաբերակցության համարիչի նվազումը և հայտարարի աճն ավելի են մեծացրել համակարգի զուտ շահութաբերության անկումը:

Ընդհանուր առմամբ, այս վիճակը ենթադրելի էր, քանի որ տնտեսական անկայունության մեծացումը բարձրացրել էր նաև կապիտալի շուկայում փողի արժեքը՝ տոկոսադրույքը, ինչն էլ, իր հերթին, հանգեցրել էր բանկային համակարգի տոկոսային մուտքերի աճին: Սակայն, միաժամանակ, այդ անկայուն վիճակը մեծ ազդեցություն է ունեցել ծախսային հոդվածների վրա, որն արտահայտվել է, օրինակ, բանկերի կողմից ներգրավվող միջոցների տոկոսադրույքների կամ անհուսալի ճանաչվող դեբիտորական պարտքերի (տրամադրվող վարկերի) ծավալների աճով: Այս ամենը նպաստել է բանկային համակարգում տոկոսային եկամուտների մեծացմանը, սակայն, միաժամանակ, արձանագրվել է զուտ շահույթի անկում, հետևաբար նաև՝ զուտ շահութաբերության գործակցի խոր նվազում:

Բացի զուտ շահութաբերության գործակցի դիտարկումից, հարկ ենք համարում անդրադառնալ նաև ակտիվների և սեփական կապիտալի շահութաբերության փոփոխությանը (ROA և ROE):

ՀՀ բանկային համակարգում ակտիվների և սեփական կապիտալի շահութաբերության պարագայում պահպանվել են այն նույն միտումները, որոնք առկա էին զուտ շահութաբերության դեպքում. մասնավորապես՝ 2017-2019 թվականներին ձևավորված աճը 2020 թվականին փոխարինվել է անկմամբ: Հատկանշական է նաև այն, որ ինչպես զուտ, այնպես էլ ակտիվների և սեփական կապիտալի շահութաբերության գործակիցների դեպքում տեղի



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3


ՀՀ բանկային համակարգում ակտիվների և սեփական կապիտալի շահութաբերության փոփոխությունը 2016-2020 թթ.

Է ունեցել ոչ միայն հարաբերակցության համարիչի նվազում, այլև հայտարարի մեծացում: Նշենք, որ ակտիվների մեծացումը նախևառաջ կարող է պայմանավորված լինել վարկային պորտֆելի մեծացմամբ՝ որպես հետևանք փողի շուկայում պահանջարկի ավելացման: Իսկ ահա սեփական կապիտալի ավելացումն առավելապես պայմանավորված է 2019 թվականի գործունեության արդյունքներով, ինչպես նաև 2020 թվականին կատարված ներդրումներով:

Այնուամենայնիվ, միայն համախմբված

ցուցանիշների ներկայացումը բավարար չէ ռոբոտում տեղի ունեցող փոփոխությունների կառուցվածքը գնահատելու համար, հետևաբար՝ անդրադառնանք նաև ՀՀ-ում գործող 17 առևտրային բանկերին:

2020 թվականին ամենամեծ զուտ շահույթ է ապահովել «Արդշինբանկ» ՓԲԸ-ն՝ մոտ 13.1 մլրդ ՀՀ դրամ: Ըստ այս ցուցանիշի՝ երկրորդ և երրորդ տեղերում են, համապատասխանաբար, «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն (մոտ 9 մլրդ ՀՀ դրամ) և «Արմավիսբանկ» ՓԲԸ-ն (մոտ 7.1 մլրդ ՀՀ դրամ), իսկ հետնապահներն են «ԷՎՈԿԱԲԱՆԿ»



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

ՀՀ առևտրային բանկերի զուտ շահույթը 2019-2020 թթ.

ՓԲԸ-ն (0.76 մլրդ ՀՀ դրամ) և «Յունիբանկ» ԲԲԸ-ն (0.43 մլրդ ՀՀ դրամ): Ընդհանուր առմամբ, ամենաբարձր և ամենացածր զուտ շահույթ ապահոված ՀՀ բանկերի համապատասխան ցուցանիշների հարաբերակցությունը 30.8 է, ինչը վկայում է բավական բարձր աստիճանի տարբերակվածության մասին (գծապատկեր 4):

Այժմ անդրադառնանք նրան, թե դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ առևտրային բանկերից քանիսում է տեղի ունեցել ֆինանսական արդյունքի՝ զուտ շահույթի անկում: Կարող ենք հավաստել, որ ՀՀ-ում գործող 17 առևտրային բանկերից 12-ի դեպքում (մոտ 71%) արձանագրվել է նման երևույթ (անկման միջին տեմպը՝ -43%):


Սա, բնականաբար, կարող է հանգեցնել բավական լուրջ խնդիրների, քանի որ ՀՀ առևտրային բանկերից գրեթե 3/4-ի դեպքում տեղի է ունեցել զուտ շահույթի՝ միջինում գրեթե կիսով չափ անկում: Այսինքն՝ ՀՀ բանկային համակարգը խորապես կրել է պատերազմի և համավարակի հետևանքները:

Սակայն, հետաքրքրական է, որ նույնիսկ նման չափերի հասնող անկման պարագայում ՀՀ բոլոր առևտրային բանկերը

2020 թվականին գործել են դրական ֆինանսական արդյունքով, այն է՝ զուտ շահույթով, այլ ոչ թե վնասով:

Հարկ ենք համարում նաև նշել, որ այդ ժամանակահատվածում զուտ շահույթի աճ ապահովել է ընդամենը 5 բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ (36.5%), «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ (72.1%), «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ (21.4%), «Մեյլաթ Բանկ» ՓԲԸ (2.6%) և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ (202.4%): Ընդ որում, վերջինս միակ բանկն էր, որ 2019 թվականին աշխատել էր վնասով:

Այժմ ներկայացնենք ՀՀ-ում գործող առևտրային բանկերի ակտիվների շահութաբերության փոփոխությունը (գծապատկեր 5): Հիշեցնենք, որ ակտիվների շահութաբերությունը հաշվարկվում է՝ կազմակերպության զուտ շահույթը հարաբերելով ակտիվների հաշվեկշռային արժեքին: Այս ցուցանիշը համապարփակ ձևով արտացոլում է, թե կազմակերպությունն ինչ արդյունավետությամբ է օգտագործում իր տիրապետման և տնօրինման ներքո գտնվող տնտեսական միջոցները՝ ակտիվները: Ակտիվների շահութաբերությունը ցույց է տալիս կազմակերպության միավոր ակտիվին բաժին ընկնող զուտ շահույթի մե-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

ՀՀ առևտրային բանկերում ակտիվների շահութաբերությունը 2019-2020 թթ.

ծությունը²:

2020 թվականին 17 առևտրային բանկերից ակտիվների շահութաբերության ամենաբարձր գործակիցը գրանցվել է «Մելլաթ Բանկ» ՓԲԸ-ում՝ 2.8%: Հետաքրքրական է, որ 2019 թվականին նույնպես բանկն այս ցուցանիշով առաջատար է եղել՝ 3.3%: Արձանագրենք նաև, որ 3 բանկ ըստ այս գործակցի 2019 թվականին գրանցել է ավելի բարձր ցուցանիշ, քան 2020 թվականի ամենաբարձր ցուցանիշն է:

Ընդհանուր առմամբ, 2020 թվականին ակտիվների շահութաբերության համեմատաբար բարձր ցուցանիշ են գրանցել նաև «Արմավիսբանկ» ՓԲԸ-ն և «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն (երկուսի դեպքում էլ՝ 1.8%), իսկ ամենացածր ցուցանիշի կրողներն են «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն և «Յունիբանկ» ԲԲԸ-ն (մոտ 0.2%):


Նույն ժամանակահատվածում, 2019 թվականի համեմատ, 12 առևտրային բանկերի ակտիվների շահութաբերությունը գրանցել է անկում, և միայն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում, «Արդշինբանկ» ՓԲԸ-ում, «ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա» ՓԲԸ-

ում, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում արձանագրվել է շահութաբերության քննարկվող ցուցանիշի աճ: Ընդ որում, այս 5 բանկից 4-ի դեպքում գրանցվել է նաև զուտ շահույթի մեծացում:

Նշենք նաև, որ ակտիվների շահութաբերության անկմանը զուգահեռ, ՀՀ 15 առևտրային բանկերում տեղի է ունեցել նաև ակտիվների հաշվեկշռային արժեքի աճ, իսկ ակտիվների ծավալի անկում գրանցվել է միայն «ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա» ՓԲԸ-ում և «Յունիբանկ» ԲԲԸ-ում:

Բանկային համակարգում ֆինանսական արդյունավետության գնահատման բավական տարածված ցուցանիշ է նաև սեփական կապիտալի շահութաբերությունը, որը ցույց է տալիս կազմակերպության ներգրավված սեփական միջոցների օգտագործման արդյունավետությունը և հաշվարկվում զուտ շահույթի ու սեփական կապիտալի հարաբերակցությամբ:

Բանկային համակարգում այս ցուցանիշի դիտարկման կարևորությունը պայմանավորված է ինչպես ոլորտում կանո-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

ՀՀ առևտրային բանկերում սեփական կապիտալի շահութաբերությունը 2019-2020 թթ.

² The Official Page of Corporate Finance Institute /CFI/, <https://corporatefinanceinstitute.com/resources/knowledge/finance/return-on-assets-roa-formula/>, visited on 09.02.21 9:40 PM

նադրական կապիտալի նվազագույն ծավալի ապահովման պահանջով, այնպես էլ, բանկերի դեպքում, կապիտալի արդյունավետ կառուցվածքի ապահովման անհրաժեշտությամբ³:

ՀՀ բանկային համակարգում այս ցուցանիշի դեպքում նույնպես պահպանվել է անկումային վիճակ: Մասնավորապես՝ 13 առևտրային բանկերում սեփական կապիտալի շահութաբերությունը գրանցել է անկում, ինչն ուղեկցվել է 16 բանկում սեփական կապիտալի աճով, որի հետևանքով զուտ շահույթի անկման խորապատկերում շահութաբերության այս ցուցանիշը գրանցել է ավելի խոր անկում: Սեփական կապիտալի շահութաբերությամբ երեք առաջատարներն են «Արդշինբանկ» ՓԲԸ-ն, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն և «Արմավիսբանկ» ՓԲԸ-ն, և միայն այս բանկերի սեփական կապիտալի շահութաբերությունն է գերազանցել 10%-ը: 2020 թվականին սեփական կապիտալի շահութաբերության աճ են գրանցել «Արդշինբանկ» ՓԲԸ-ն, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն:

Ամփոփելով հոդվածը՝ կարող ենք ասել,

որ ՀՀ բանկային համակարգը բավական ուժգին կերպով է իր վրա կրել համավարակի և պատերազմի բացասական ազդեցությունը, ինչի հետևանքով կտրուկ կերպով անկում են ապրել զուտ շահույթի, զուտ շահութաբերության, ակտիվների և սեփական կապիտալի շահութաբերության մակարդակները: Տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունը, կարծես թե, դուրս է մղել արդեն իսկ ձևավորված ՀՀ բանկային համակարգը զարգացման որոշակի ուղուց, ինչը, բնականաբար, տնտեսական լուրջ խնդրի առաջացման վտանգ է պարունակում, քանի որ տնտեսության ֆինանսական հատվածը ՀՀ-ում մեծապես կախված է բանկային համակարգից, իսկ տնտեսության ամբողջական կարգավորումը՝ տնտեսության իրական և ֆինանսական հատվածների հավասարակշռությունից: Հետևաբար՝ կարող ենք կատարել մի կարևոր եզրակացություն. բանկային համակարգի նմանատիպ ևս մեկ խոր անկումը կարող է ճակատագրական նշանակություն ունենալ ոչ միայն ՀՀ ֆինանսական համակարգի, այլև ողջ տնտեսության համար:

³ The Official Page of Corporate Finance Institute /CFI/, <https://corporatefinanceinstitute.com/resources/knowledge/finance/what-is-return-on-equity-roe/>, visited on 09.02.21 9:40 PM

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, ֆինանսական հաշվետվություններ, <https://www.acba.am/hy/reports>
2. «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ, ֆինանսական հաշվետվություններ, <https://www.ameribank.am/Page.aspx?id=179&lang=33>, <https://www.ameribank.am/Page.aspx?id=176&lang=33>
3. «Այդի Բանկ» ՓԲԸ, ֆինանսական հաշվետվություններ, <https://www.idbank.am/content/financial-statements-and-audit-reports/>, <https://www.idbank.am/content/quarter-reports/>
4. «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ, ֆինանսական հաշվետվություններ, <https://www.araratbank.am/hy/hashvetvutyunner/3>, <https://www.araratbank.am/hy/hashvetvutyunner/1/>
5. «Արդշինբանկ» ՓԲԸ, ֆինանսական հաշվետվություններ, <https://www.ardshinbank.am/reports/annual-reports>, https://www.ardshinbank.am/reports/inter-im-reports?field_year_value%5Bvalue%5D%5B-year%5D=2020
6. «Արմավիսբանկ» ՓԲԸ, ֆինանսական հաշվետվություններ, <http://www.armswissbank.am/am/reports/>
7. «Արցախբանկ» ՓԲԸ, ֆինանսական հաշվետվություններ, <https://www.artsakh-bank.com/reports>,
8. «ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա» ՓԲԸ, ֆինանսական հաշվետվություններ, <https://www.byblosbankarmenia.am/images/reports/>
9. «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, ֆինանսական հաշվետվություններ, <https://www.about.hsbc.am/hy-am/hsbc-in-armenia/financial-information>
10. «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ, ֆինանսական հաշվետվություններ, <https://www.evocabank.am/reports/financial-performance.html#financial-performance>, <https://www.evocabank.am/reports/financial-performance.html#auditors-report>

11. «Ինեկոբանկ» ՓԲԸ, ֆինանսական հաշվետվություններ, <https://www.inecobank.am/hy/reports>
12. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ֆինանսական հաշվետվություններ, <https://conversebank.am/hy/annual-reports/>, <https://conversebank.am/hy/quarter-reports/>
13. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ, ֆինանսական հաշվետվություններ, <http://www.armbusinessbank.am/am/page/Reports>
14. «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ, ֆինանսական հաշվետվություններ, <https://www.aeb.am/hy/hashvetvutyunner/>, <https://www.aeb.am/hy/hashvetvutyunner/>
15. «Մելլատ Բանկ» ՓԲԸ, ֆինանսական հաշվետվություններ, <https://www.mellatbank.am/am/services/reports/>, <https://www.mellatbank.am/am/auditor-reports/>, <https://www.mellatbank.am/am/reports/quarterly-reports>
16. «Յունիբանկ» ԲԲԸ, ֆինանսական հաշվետվություններ, <https://www.unibank.am/hy/finance/>
17. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, ֆինանսական հաշվետվություններ, <https://www.vtb.am/am/report>
18. The Official Page of Corporate Finance Institute /CFI/, <https://corporatefinanceinstitute.com/resources/knowledge/finance/return-on-assets-roa-formula/>
19. The Official Page of Corporate Finance Institute /CFI/, <https://corporatefinanceinstitute.com/resources/knowledge/finance/what-is-return-on-equity-roe/>

Gagik BADADYAN

Магистрант кафедры управления, АГЭУ

ФИНАНСОВАЯ СИСТЕМА

ПРИБЫЛЬНОСТЬ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ АРМЕНИИ: КАК ВОЙНА И ПАНДЕМИЯ ПОВЛИЯЛИ НА ЭФФЕКТИВНОСТЬ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ?

Макроэкономическая стабильность в каждой стране характеризуется одновременным равновесием в реальном и финансовом секторах экономики. В этом контексте одним из важнейших составляющих является банковская система, обеспечивающая сбалансированность денежно-кредитного сектора экономики. Республика Армения в этом плане не исключение. Кроме того, банковский сектор имеет ключевое значение в финансовой системе РА. Следовательно, оценка финансовой эффективности организаций отрасли является необходимостью. Когда пандемия широко распространилась по стране, и война недавно «закончилась», то изучение коммерческой эффективности финансовой системы становится еще более важным.

Поэтому в статье предпринята попытка оценить вызванное эпидемией и войной изменение финансовой эффективности банковской системы Армении в свете прибыльности. С этой целью были изучены тенденции чистой прибыли, собственного капитала и рентабельности активов коммерческих банков РА, а также изменения чистой прибыли:

Ключевые слова: *эпидемия, война, банковская система, прибыльность, стабильность*

Դաիկ ԲԱԴԱԴՅԱՆ

MA Student at the Chair of Management, ASUE

FINANCIAL SYSTEM

PROFITABILITY IN THE ARMENIAN BANKING SYSTEM: HOW DID THE WAR AND THE PANDEMIC AFFECT THE EFFICIENCY OF THE BANKING SYSTEM?

Macroeconomic stability in each country is characterized by a simultaneous equilibrium in the real and monetary sectors of the economy. In this context, the banking sector is one of the most important sectors that ensures the balance of the monetary sector of the economy. The Republic of Armenia is no exception in this regard. Moreover, the banking sector has key importance in the RA financial system. Therefore, it is necessary to evaluate the financial efficiency of the organizations in the sector. And when the pandemic is widespread in the country and the war has just "ended", the study of the commercial efficiency of the system becomes more important. That is why the article tries to assess the change due to the pandemic and the war in the financial efficiency of the Armenian banking system in the form of profitability. For this purpose, the paper examines the tendencies of the net income, ROA, ROE and margin changes in the banking system of the RA.

Keywords: *pandemic, war, banking system, profitability, stability*